ՊԱՏԻՎ ՈՒՆԵՍ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 4(84), 29 ՄԱՅԻՍ, 2026թ.

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՈՒՇԱԳԻՐ՝ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրը և «Դրոններով մրցավազքի Հայաստանի ֆեդերացիա» կրթական, սպորտային հասարակական կազմակերպությունը սույն թվականի մայիսի 27-ին կնքել են համագործակցության հուշագիր՝ ուղղված կրթական, տեխնոլոգիական և գիտական ոլորտներում համատեղ նախաձեռնությունների իրականացմանը:

Հուշագրի շրջանակում կողմերը նախատեսում են համագործակցել արտակարգ իրավիճակների կառավարման, աղետների ռիսկի նվազեցման, քաղաքացիական պաշտպանության և հանրային անվտանգության ոլորտներում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ: Համագործակցությունը ներառում է նաև գիտաժողովների, սեմինարների և մասնագիտական քննարկումների կազմակերպում, ուսումնական և մեթոդական նյութերի համատեղ մշակում, ինչպես նաև ուսանողների և երիտասարդ մասնագետների ներգրավմամբ ծրագրերի իրականացում:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու 3D մոդելավորման, արհեստական բանականության և անօդաչու թռչող սարքերի կիրառման հնարավորությունների ուսումնասիրմանը որոնողափրկարարական, մոնիթորինգային և ռիսկերի գնահատման գործընթացներում:

Կողմերը կարևորել են կրթության, գիտության և նորարարական տեխնոլոգիաների համադրումը ոլորտային կարողությունների զարգացման, փորձի փոխանակման և արդյունավետ համագործակցության ինստիտուցիոնալ հիմքերի ամրապնդման գործում:

«ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ» ԹԵՄԱՅՈՎ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մայիսի 22-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում ռեկտոր Մ.Մուրադյանի գլխավորությամբ տեղի է ունեցել «Քրեական դատավարության փուլային համակարգը» թեմայով կլոր սեղան-քննարկում, որին մասնակցել են ոլորտի մասնագետներ, դասախոսներ, գիտական հանրույթի ներկայացուցիչներ և իրավապահ համակարգի աշխատակիցներ:

Քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել քրեական դատավարության փուլային համակարգի տեսական և գործնական հիմնախնդիրներին, քրեական վարույթի փուլերի առանձնահատկություններին, դրանց փոխկապակցվածությանը, ինչպես նաև գործող օրենսդրական կարգավորումների կիրառման պրակտիկային:

Բանախոսները ներկայացրել են մասնագիտական զեկույցներ՝ քննարկելով նախաքննության, դատաքննության և դատավարության մյուս փուլերի արդյունավետ կազմակերպման, դատավարական երաշխիքների ապահովման, ինչպես նաև ոլորտում առկա խնդիրների և դրանց լուծման հնարավոր ուղիների վերաբերյալ հարցեր:

Միջոցառման շրջանակում մասնակիցները հանդես են եկել մասնագիտական դիտարկումներով և առաջարկություններով՝ կարևորելով քրեական դատավարության փուլային համակարգի շարունակական կատարելագործման և իրավակիրառ պրակտիկայի զարգացման անհրաժեշտությունը:

Կլոր սեղան-քննարկումն անցել է ակտիվ մասնագիտական քննարկումների մթնոլորտում՝ նպաստելով փորձի փոխանակմանն ու ոլորտային համագործակցության ամրապնդմանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺՆԵՎԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ.

ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 7-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր Մանուկ Մուրադյանը հանդիպել է Անվտանգության ոլորտի կառավարման Ժնևի կենտրոնի (DCAF) Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բաժնի պետի տեղակալ Անթյե Ֆրիցի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին՝ Մգ Մուրադյանը կարևորել է Կենտրոնի հետ համագործակցության եզրերի հաստատումը, շնորհակալություն հայտնել հանդիպումը նախաձեռնելու համար և հանգամանալից ներկայացրել բարեփոխումների համատեքստում Կրթահամալիրի գործունեությունն ու դերակատարությունը՝ Ներքին գործերի նախարարությունը մասնագիտական կադրերով համալրելու, վերջինների շարունակական կրթությունն ապահովելու, ինչպես նաև, ըստ կրթական կարիքների գնահատման, այդ գործընթացն արդիականացնելու և առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ: Ռեկտորն ընդգծել է միջազգային փորձի ուսումնասիրման ու տեղայնացման անհրաժեշտությունը, մասնավորապես՝ ոստիկանական կադրեր պատրաստելիս, և նշել հանրային ավտանգության մասնագիտությամբ բարձրագույն կրթության նոր կրթական չափորոշիչը մշակելու համար ակնկալվող աջակցության մասին:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Ա.Ֆրիցը ներկայացրել է պատվիրակության կազմը, առցանց միացումով մասնակցին, մատնանշել Կենտրոնի հնարավորությունների, փորձագիտական այն ռեսուրսների, գործիքակազմերի և ունեցած փորձի մասին, որով կարող են օժանդակել Կրթահամալիրին, մասնավորապես՝ բարեվարքության, էթիկայի, կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում, ինչպես նաև՝ պատրաստակամություն հայտնել համատեղ գտնելու հետագա համագործակցության հնարավոր ուղիները:

Կողմերի միջև ծավալված քննարկման ընթացքում բարձրաձայնվել են համագործակցության նախնական ուղղությունները, և պայմանավորվածություն է ձեռք բերվել աշխատանքային քննարկում ունենալու մասին: Մ.Մուրադյանն ու Ա.Ֆրիցը հույս են հայտնել, որ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հանդիպումը կդառնա արդյունավետ գործընկերության հաստատման և Կրթահամալիրի մասնագիտական կարողությունների ամրապնդման միջոց:

Հյուրերը Կրթահամալիրին են փոխանցել Կենտրոնի հրատարակած նյութերը, որոնք կարող են օգտակար լինել հատկապես վերապատրաստումների դասընթացները կազմակերպելիս:

Հանդիպումն ավարտվել է Կրթահամալիրի տարածքի շրջայցով:

ՄԱՅԻՍԻ 28-Ի ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

Մայիսի 28-ը հայ ժողովրդի նորագույն պատմության առանցքային օրերից է. այն խորհրդանշում է պետականության վերականգնումը և անկախության գաղափարի հաղթանակը ծանրագույն պայմաններում: 1918 թվականի մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը՝ դարերի ընդմիջումից հետո վերականգնելով հայկական պետականությունը:

Առաջին Հանրապետության ստեղծումը պայմանավորված էր Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական փուլում տեղի ունեցած աշխարհաքաղաքական փոփոխություններով և Հարավային Կովկասում ստեղծված բարդ իրավիճակով: Ռուսական կայսրության փլուզումից հետո տարածաշրջանը հայտնվեց անկայունության մեջ, իսկ հայ ժողովուրդը կանգնեց գոյաբանական լուրջ վտանգի առաջ:

Այս ծանր պայմաններում տեղի ունեցան Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը, որոնք վճռորոշ նշանակություն ունեցան հայ ժողովրդի համար: Հայկական ուժերը, ցուցաբերելով բացառիկ քաջություն և կազմակերպվածություն, կարողացան կասեցնել թուրքական զորքերի առաջխաղացումը: Հատկապես Սարդարապատի հաղթանակը դարձավ պատմական բեկում, որն իրական հնարավորություն ստեղծեց անկախ պետականության հռչակման համար:

Մայիսի 28-ին Թիֆլիսում Հայոց ազգային խորհուրդը հռչակեց Հայաստանի անկախությունը: Նորաստեղծ պետությունը կանգնած էր բազմաթիվ մարտահրավերների առաջ՝ քաղաքական անկայունություն, տնտեսական ծանր վիճակ, փախստականների հսկայական հոսք, սով և հիվանդություններ: Չնայած այս դժվարություններին՝ Առաջին Հանրապետությունը կարողացավ ձևավորել պետական կառավարման հիմքերը, ստեղծել բանակ, հաստատել կրթական և մշակութային հաստատություններ:

Առաջին Հանրապետության գոյությունը տևեց ընդամենը երկու տարի (1918–1920), սակայն դրա նշանակությունը հայ ժողովրդի պատմության մեջ անգնահատելի է: Այն վերածվեց անկախության գաղափարի իրական մարմնավորման և ապացուցեց, որ նույնիսկ ամենածանր պայմաններում հնարավոր է վերականգնել պետականությունը: Այս փորձը դարձավ հետագա սերունդների համար կարևոր դաս և ոգեշնչման աղբյուր:

Մայիսի 28-ը այսօր նշվում է որպես Հայաստանի Հանրապետության պետական տոն՝ Հանրապետության օր: Այն հիշեցնում է ոչ միայն անցյալի հերոսական պայքարի, այլ նաև անկախության արժեքի մասին: Այս օրը կոչ է անում գնահատել պետականությունը, ամրապնդել ազգային միասնությունը և շարունակել զարգացնել անկախ Հայաստանը:

Այսպիսով, Մայիսի 28-ը միայն պատմական իրադարձություն չէ, այլ գաղափար՝ ազատության, ինքնիշխանության և ազգային արժանապատվության խորհրդանիշ, որը շարունակում է ուղեկցել հայ ժողովրդին մինչ այսօր:

Այս տարի Մայիսի 28-ին անցկացված շքերթը դարձավ Հայաստանի պետականության, ազգային արժանապատվության և բանակի կարևորության խորհրդանիշը: Հանրապետության տոնին նվիրված միջոցառումը մեկ անգամ ևս հիշեցրեց, որ անկախությունը ձեռք է բերվել պայքարի և միասնականության շնորհիվ:

Շքերթի ընթացքում ներկայացվեցին զինված ուժերի ստորաբաժանումները, ժամանակակից տեխնիկան և հայկական բանակի կարողությունները: Այն ուներ ոչ միայն հանդիսավոր, այլև խորհրդանշական նշանակություն՝ փոխանցելով ուժի, կայունության և պետականության պահպանման գաղափարը:

Այս տարվա շքերթը առանձնացավ նաև իր հուզական մթնոլորտով: Պատերազմից հետո այն հանրության համար դարձավ համախմբման, հիշողության և ապագայի հանդեպ վստահության ուղերձ: Միաժամանակ միջոցառումը հիշեցրեց, որ պետության ամրությունը կախված է ազգային միասնությունից, բանակի պատրաստվածությունից և պատմական հիշողության պահպանությունից:

Միջոցառումը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ անկախ պետականությունը հայ ժողովրդի ամենամեծ ձեռքբերումներից է, իսկ դրա պահպանումը պահանջում է միասնականություն, պատասխանատվություն և ուժեղ հայրենասիրություն:

Այսօր, առավել քան երբևէ, կարևոր է գնահատել մեր պետականության արժեքը և հարգել այն մարդկանց, ովքեր ծառայել ու ծառայություն են իրականացնում հայրենիքի պաշտպանության համար: Շքերթը կարելի է ընդունել տարբեր կերպ, բայց դրա հիմնական նպատակը հասարակությանը համախմբելն ու ազգային արժանապատվության գաղափարը պահպանելն էր:

Քննադատությունը բնական է ցանկացած հասարակության մեջ, սակայն նման օրերին կարևոր է հիշել Մայիսի 28-ի իրական խորհուրդը՝ անկախ պետականության վերականգնումը: Շքերթը ոչ թե միայն տեխնիկայի ցուցադրություն էր, այլ հարգանքի տուրք մեր պատմությանը, բանակին և ազգային պայքարին:

Կարելի է տարբեր քաղաքական գնահատականներ ունենալ, բայց պետականության և հայրենիքի գաղափարը պետք է մնա բոլորիս միավորող արժեքը, ոչ թե ներքին բաժանում ստեղծել, այլ վստահություն և միասնականություն փոխանցել՝ հանուն պետականության ամրապնդման:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԵՎ ՄԱԿ ՓԳՀ-Ի ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Մայիսի 23-24-ը ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի և ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (UNHCR) համագործակցությամբ, ԵՄ-ի կողմից համաֆինանսավորվող «Հայաստանում միգրացիայի և ապաստանի արդյունավետ կառավարման քաղաքականության շրջանակի և կարողությունների ընդլայնում» ծրագրի շրջանակում կազմակերպվել է դասընթաց՝ Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով:

Դասընթացը միտված էր մասնակիցներին անհրաժեշտ գիտելիքների և գործնական հմտությունների փոխանցմանը՝ Կրթահամալիրում ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատակիցների վերապատրաստման առաջիկա ծրագրերին արդյունավետ ներգրավվելու նպատակով:

Մասնակիցները ծանոթացել են ապաստանի, փախստականների և հարկադիր տեղահանված այլ անձանց պաշտպանության ոլորտում կիրառվող միջազգային չափանիշներին, ընթացակարգերին և լավագույն փորձին:

Համագործակցությունը կարևոր ներդրում է կրթական գործընթացի արդիականացման, փորձի փոխանակման և ոլորտային կարողությունների ամրապնդման գործում:

Դասընթացի ավարտին կազմակերպիչները պայմանավորվածություն են ձեռք բերել պարբերաբար իրականացնել համատեղ ծրագրեր՝ կայուն համագործակցության ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման և մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման նպատակով:

«ԵՐԵՎԱՆԻ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ-ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

2026 թվականի մայիսի 6-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիր էին այցելել «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն» ՊՈԱԿ-ի ավագ դպրոցի աշակերտները՝ հումանիտար առարկաների ուսուցիչ Ն.Տանանյանի ու Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ոստիկանության վետերաններ-ի խորհրդի նախագահ Գ.Վարդանյանի ուղեկցությամբ:

Աշակերտները շրջեցին Կրթահամալիրի տարածքում: Նրանց ներկայացվեց Արցախյան հերոսամարտում և ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված ՆԳՆ աշխատակիցների հուշակոթողը, այցելեցին Կրթահամալիրի մշակույթի տուն: ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ Ոստիկանության պատմության թանգարանի առաջատար մասնագետ Դ. Հովսեփյանի ուղեկցությամբ սովորողները մի փոքր պատմական էքսկուրս կատարեցինգ ծանոթացան, թե երբ և ինչպես է ստեղծվել թանգարանը, ինչ բաժիններից է բաղկացած, ապա հանգամանորեն լուսաբանվեցին ցուցասրահում տեղ գտած նյութերը: Ցուցասրահի նմուշներից կարելի էր պատկերացում կազմել, թե ոստիկանի համազգեստը ժամանակի ընթացքում ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել: Աշակերտները ծանոթացան նաև լուսանկարների, շքանշանների, զանազան փաստաթղթերի հետ, որոնցից յուրաքանչյուրն իր պատմությունն ունի: Ծանոթացան նաև ՀՀ ոստիկանության անցած ճանապարհին՝ Հայաստանի առաջին հանրապետության ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի սխրանքներից մինչև Միլիցիոներ Անդրեյի ազնիվ և օրինակելի կերպարը: Աշակերտներին հետաքրքրեցին ոստիկանությունում կիրառվող տեխնիկական միջոցները, ծանոթացան հանցագործությունների դեմ պայքարում տեխնիկայի օգտագործման և դրանց միջոցով ապացույցներ ձեռք բերելու հնարավորություններին:

Ն.Տանանյանի՝ ժեստերի լեզվով թարգմանության շնորհիվ աշակերտները մեծ հետաքրքրությամբ ու ուշադրությամբ լսեցին և մասնակցեցին մի շարք պատմական դրվագների ներկայացմանը:

Աշակերտների այցը համընկել էր հիշարժան իրադարձությանը. թանգարանի աշխատանքների վերսկսման օրվանից՝ 2015թ. մայիսի 8-ից ի վեր, գրանցվել էր 5000-րդ այցելուի մուտքը թանգարան, և այդ կապակցությամբ Դ.Հովսեփյանն ու Գ.Վարդանյանը նվերներ հանձնեցին 5000-րդ և 5001-րդ այցելուներին, իսկ Նգ Տանանյանին որպես նվեր հանձնվեց Ոստիկանության պատմության թանգարանի վերաբերյալ եռալեզու գրքույկը:

Անհրաժեշտ է նշել, որ նման այցելություն կատարվել է նաև 2023 թ. հունվարի 31-ին, որին մասնակցել է «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմինե Բաբայանը:

Վերջում աշակերտներն իրենց տպավորությունները գրանցեցին պատվավոր հյուրերի գրքում և հրաժեշտ տվեցին կրթահամալիրին:

Դ. Հովսեփյան
առաջատար մասնագետ,
ոստիկանության պաշտոնաթող գնդապետ

«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ» (API) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Մայիսի 7-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում տեղի է ունեցել «Հայաստանյան խաղաղության նախաձեռնություն» (API) կազմակերպության և Կրթահամալիրի միջև փոխըմբռնման հուշագրի կնքման արարողությունը:

Հուշագիրը միտված է կրթության, քաղաքացիական պաշտպանության, առաջին օգնության ուսուցման, համայնքային դիմադրողականության բարձրացման, ինչպես նաև անվտանգային իրազեկվածությանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացմանը: Համագործակցության շրջանակում նախատեսվում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել սահմանամերձ համայնքներում իրականացվող ուսուցողական նախաձեռնություններին, երիտասարդների մասնագիտական վերաինտեգրմանն ու արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման կարողությունների զարգացմանը:

Կրթահամալիրի ռեկտոր Մանուկ Մուրադյանը, կարևորելով նման համագործակցությունների դերը, նշել է. «Ժամանակակից անվտանգային մարտահրավերների պայմաններում կրթությունը, պատրաստվածությունն ու մարդակենտրոն համագործակցությունը պետության դիմադրողականության կարևորագույն բաղադրիչներից են: Ուրախ եմ, որ մեր համագործակցությունը միտված է ոչ միայն գիտելիքի փոխանցմանը, այլև անվտանգ ու պատասխանատու հասարակության ձևավորմանը»:

Արարողությունն անցել է կառուցողական և համագործակցային մթնոլորտում՝ վերահաստատելով կողմերի պատրաստակամությունը՝ շարունակելու և զարգացնելու երկարաժամկետ, արդյունավետ գործընկերությունը:

ԻՆՏԵՐՊՈԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՅՑԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Երեխաների նկատմամբ բռնության և չարաշահման կանխարգելման, բացահայտման և ազգային մեխանիզմների ամրապնդման ուղղությամբ ՀՀ համապատասխան գերատեսչությունների հետ համագործակցության հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով 2026թ. ապրիլի 20-29-ը Հայաստան այցելած Ինտերպոլի Երեխաների դեմ հանցագործությունների (Crimes Against Children - CAC) ենթավարչության ներկայացուցիչները «Safeguarding» բաղադրիչի շրջանակում ապրիլի 28-ին հյուրընկալվել են ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում:

Հյուրերին ողջունել է Կրթահամալիրի ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտոր Միսակ Մարկոսյանը՝ համապարփակ ներկայացնելով Կրթահամալիրի գործունեությունը: Հյուրերի հետաքրքրության շրջանակում նա մասնավորապես անդրադարձել է ոստիկանական ուսումնական ստորաբաժանումում իրականացվող կրթական ծրագրերին, ինչպես նաև այն դասընթացներին, մոդուլներին ու թեմաներին, որոնք ուսումնասիրվում են սովորողների և վերապատրաստվող ոստիկանական կազմի կողմից:

Ինտերպոլի գլխավոր քարտուղարության (Լիոն, Ֆրանսիա) Երեխաների դեմ ուղղված հանցագործությունների պաշտպանության մասնագիտացված սպա Ալեքսանդրու Դան Գերտան և նույն ուղղության գլխավոր ծրագրի հիմնական սպա Աննա Սարգսյանը ներկայացրել են «Safeguarding» բաղադրիչի շրջանակում իրականացվելիք աշխատանքները և ՀՀ իրավապահ համակարգին տրամադրվելիք աջակցության հիմնական ուղղությունները: Նրանք ընդգծել են, որ ակնկալում են Կրթահամալիրի փորձագիտական աջակցությունը՝ նախատեսվող վերապատրաստման դասընթացների, այդ թվում՝ վերապատրաստողների վերապատրաստման (TOT) ձևաչափով ծրագրերի իրականացման շրջանակում:

Համագործակցության հնարավոր ուղիների նախանշման նպատակով ծավալված քննարկմանը մասնակցել են նաև Կրթահամալիրի գիտահետազոտական և նորարարությունների գծով աշխատանքները համակարգող պրոռեկտոր Է. Մարգարյանը, Ոստիկանական ուսումնական ստորաբաժանման պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գրիգորյանը:

Այցի ավարտին հյուրերը շրջել են Կրթահամալիրի տարածքում, ծանոթացել սովորողների գործնական պարապմունքների համար ստեղծված պայմաններին՝ այցելելով մասնագիտացված լսարաններ, վիրտուալ հրաձգարան և մարզասրահ:

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ՍԱ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԻԱՅՆ ԵՐԱԶԱՆՔ ՉԷ. ՍԱ ԳԻՏԱԿՑՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ Է

Ես ոստիկանի մասնագիտությունը չեմ ընտրել պարզապես որպես աշխատանքգ ես ընտրել եմ այն որպես ճանապարհգ ճանապարհ, որտեղ ամեն օր պետք է ապացուցես ոչ միայն ուրիշներին, այլ նաև ինքդ քեզ: Առաջին անգամ այդ մտքի մասին լրջորեն մտածել եմ այն ժամանակ, երբ հասկացա՝ աշխարհը միշտ չէ, որ արդար է, բայց միշտ պետք են մարդիկ, ովքեր պատրաստ են կանգնել այդ արդարության կողքին:

Իմ որոշման վրա, իհարկե, ազդեցություն է ունեցել նաև ընտանիքս, հատկապես՝ մայրս, որը միշտ աջակցել է ինձ ու ճիշտ խորհուրդներ տվել յուրաքանչյուր պահիգ ինձնից էլ շատ նա էր ոգևորված իմ ընտրության համար, և ես շնորհակալ եմ մորս իր աջակցությամբ ինձ միշտ սատարելու, ոգևորելու համար: Ընտանիքումս կան ոստիկաններ, ես փոքրուց տեսել եմ այս մասնագիտության իրական կողմը՝ ոչ միայն համազգեստը, այլ դրա ծանրությունն ու պատասխանատվությունը: Բայց ես չեմ ընտրել այն միայն օրինակով շարժվելովգ ես ընտրել եմ, որովհետև դա համընկավ իմ ներքին արժեքների հետ: Այս մասնագիտության մեջ ինձ ամենից շատ գրավում է ուժեղ լինելու գաղափարը՝ ո՛չ միայն ֆիզիկապես, այլև հոգեբանորեն: Ինձ դուր է գալիս, որ այստեղ պետք է լինես սառնասիրտ, արագ մտածող, արդար ու երբեմն էլ՝ անզիջում: Ես ունեմ այն հատկությունները, որոնք կարևոր են այս ոլորտում՝ պատասխանատվություն, դիմացկունություն, ինքնատիրապետում և նպատակասլացություն: Սա ինձ համար միայն երազանք չէգ սա գիտակցված ընտրություն է: Ես գիտեմ, թե ինչ դժվարություններ կան այս ճանապարհինգ հենց դա է ինձ համար արժեքավոր: Սովորելը ինձ հետաքրքիր է, որովհետև ամեն օր ավելի եմ մոտենում իմ նպատակին՝ դառնալ ոչ թե պարզապես ոստիկան, այլ այնպիսի մեկը, ում վստահում են: Ես ակնկալում եմ, որ այս մասնագիտությունն ինձ կտա ոչ միայն կայունություն, այլ նաև ազդեցություն մարդկանց կյանքի վրա: 5-10 տարի հետո ես ինձ տեսնում եմ կայացած, վստահ, փորձառու մասնագետ, ով արդեն իր տեղն ունի համակարգում: Այս ոլորտը միշտ պահանջված է, որովհետև հասարակությունը չի կարող գոյություն ունենալ առանց կարգի: Եվ ես հաստատ պլանավորում եմ աշխատել իմ մասնագիտությամբ: Եթե պետք լիներ նորից ընտրել, ես չէի փոխի որոշումս: Այո՛, կան դժվարություններ, որոնք ավելի ծանր են, քան պատկերացնում էի, բայց հենց այդ դժվարություններն են ձևավորում ինձ: Հիասթափություն չի եղելգ եղել է սթափություն: Ես չեմ ընտրել հեշտ ճանապարհգ ես ընտրել եմ այն ճանապարհը, որտեղ սխալվելու գինը մեծ է, բայց ճիշտ լինելու արժեքը՝ անգնահատելի: Եվ եթե մի օր կանգնեմ դժվարության առաջ, ես չեմ հարցնելու՝ արժե՞ր արդյոք: Ես արդեն գիտեմ պատասխանը: Քանի որ սա պարզապես մասնագիտություն չէ: Սա ընտրություն է՝ լինել այն մարդը, ում ներկայությունը կարգ է բերում, ում որոշումները արդարություն են ստեղծում, ում լռությունն անգամ վստահություն է ներշնչում:

Վարյա Մաթևոսյան
Ոստիկանության սերժանտ

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՓՈԽԱՆՑԱԾ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Մանկավարժության էության, դերի, մեթոդների մասին այս անգամ զրուցել ենք ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ՓԾ և ՃԿ ուսումնական ստորաբաժանման ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների ամբիոնի դոցենտ, քաղաքական գիտությունների թեկնածու Մելանյա Դավթյանի հետ:

-Տիկի՛ն Դավթյան, մանկավարժի ճանապարհը և՛ բարդ է, և՛ պատասխանատու: Ինչպե՞ս եք ընդունել մանկավարժ դառնալու որոշումը:

- Վաղ տարիքից սիրել եմ սովորելը, հասկացել եմ սովորելու, որևէ նոր բան իմանալու արժեքը: Ցանկությունս իրականացնելու հարցում օգնում էին ուսուցիչներս, ապա՝ դասախոսներս: Այնքան էի ոգևորվում, երբ սովորեցնում էին, ուղղություն էին ցույց տալիս, դաստիարակում ու խրատում էին ոչ միայն գիտելիք ստանալու մեջ, այլև ճիշտ ապրելու մեջ: Ինձ թվում էր, թե նրանք կատարում էին աշխարհում ամենակարևոր գործը: Խանդով էի նայում նրանց պատրաստվածությանը, ինքնավստահությանը, կեցվածքին: Ճակատագիրս ուղղորդեց դեպի այդ գործին, դարձրեց նրանց գործն իրականացնող հաջորդ սերնդի ներկայացուցիչը. դարձա մանկավարժ:

- Հետաքրքիր է, որ մարդիկ իրենց հուշերում հաճախ պահում են ընդամենը մեկ կամ մի քանի ուսուցչի կերպար: Ըստ Ձեզ՝ ինչու՞ չեն մոռացվում այդ ուսուցիչները:

- Ժողովուրդն ասում է՝ «Մարդ պիտի բախտավոր ծնվի»: Միշտ մտածել եմ, որ այդ բախտն սկսվում է հենց այն ուսուցիչներից, որոնց հանդիպում է մարդն իր կյանքում: Իրոք, մարդիկ իրենց հուշերում պահում են հատկապես մեկ կամ երկու ուսուցչի կերպար, որոնց ցանկանում են նմանվել: Ինձ թվում է, որ իմ կատարած աշխատանքով ես միշտ նրանց հաշվետվություն եմ տալիս և մշտապես մտածում եմ, թե ինչպես կվարվեին նրանք տվյալ իրավիճակում, որն էլ ինձ ուղղություն է տալիս:

- Ի՞նչ են սովորեցրել Ձեզ տարիները, որ փոխանցում եք երիտասարդ սերնդին:

- Մարդու բոլոր հարցերի պատասխանները նրա ընտրած մասնագիտության մեջ են: Աշխարհում կարող եք հանդիպել բազմաթիվ հիասթափությունների, դժվարությունների և նույնիսկ դավաճանությունների, սակայն մարդու ամենամոտ և հավերժ նվիրված ընկերը նրա մասնագիտությունն է, որը միշտ իր հետ է: Հետևաբար, ես միշտ փոխանցում եմ հետևյալ դասը. «Որքան տեր լինեք ձեր ընտրած մասնագիտությանը, այնքան այն տեր կլինի ձեզ ու կուղեկցի կյանքում»:

- Տիկի՛ն Դավթյան, ի՞նչ կմաղթեք մեր բազմաչարչար կանանց:

- Իրոք, բազմաչարչարությունը դարձել է հայ կնոջ ճակատագրի մի մասը: Սակայն կցանկանայի մաղթել, որ կյանքը նրանց նկատմամբ լինի առավել բարեհաճ, որ նրանք կարողանան ոչ միայն կրել դժվարությունները, այլև տեսնել ու վայելել իրենց ջանքերի պտուղները, ունենան ամուր հայրենիք, ջերմ ու ապահով հայրենի տուն, ազգային արժեքներով, կյանքի բարիքներով լի ընտանիք:

- Ինչի՞ց եք հիասթափվել, և ի՞նչն է Ձեզ ոգևորել աշխատանքային գործունեության ընթացքում:

- Այո՛, հիասթափության պահեր, անշուշտ, եղել են: Սակայն ամեն անգամ, երբ մտել եմ լսարան, դասախոսել և նայել եմ ուսանողների՝ երիտասարդ, նորափթիթ սերնդի փայլող աչքերին, պարզ ճակատներին ու հետաքրքրված, նոր գիտելիքի ծգտող հայացքներին, կրկին ոգևորվել եմ: Այդ ամենն ինձ ուժ է տվել նոր ծրագրերով ու պայքարի կամքով շարունակելու իմ աշխատանքը:

- Ի՞նչ եք կարծում, ամեն նոր սերունդ պահանջո՞ւմ է մանկավարժի իր տեսակը:

- Որքան էլ սերունդները փոխվեն, մանկավարժի առջև դրված գերագույն խնդիրը մնում է նույնը՝ ձևավորել կրթված սերունդ: Հետևաբար, պահանջվում է ոչ թե մանկավարժի նոր տեսակ, այլ ուսուցման նոր, ժամանակին համահունչ և ճկուն մեթոդներ:

- Ո՞րն է ուսանող-դասախոս հարաբերություններում հաջողության հասնելու Ձեր բանաձևը:

- «Երեխան շատ ուսուցիչներ կարող է ունենալ, ովքեր կարող են զինել տարբեր գիտելիքներով ու գիտական պաշարով, մինչդեռ երեխայի համար առաջնորդ կդառնա այն ուսուցիչը կամ դաստիարակը, ով երեխային կտա ինքնաճանաչողության դասեր»: (Ժան-Ժակ Ռուսսո)

Բարեբախտաբար, իմ դասավանդած առարկաները՝ քաղաքագիտություն, փիլիսոփայություն, սոցիոլոգիա, էթիկա և բարեվարքություն, տրամաբանություն, հնարավորություն են տալիս դասընթացները հարստացնել հայագիտական նյութերով և ուսանողներին փոխանցել ինքնաճանաչողության կարևոր դասեր: Սա օգնում է նրանց ճանաչել ու գիտակցել իրենց տեղն ու դերը հայրենիքում, ձևավորել իրենց մտածողությունն ու վարքը:

Ուսանող-դասախոս հարաբերություններում ես առաջնորդվում եմ Ռուսսոյի այս բանաձևով: Կարծում եմ՝ իմ հաջողության հիմքում ոչ միայն գիտելիք փոխանցելն է, այլև ուսանողին ինքնաճանաչողության և հայաճանաչողության ճանապարհին առաջնորդելը, ինչը կարևոր հենք է կյանքի մեջ լիարժեք ինքնադրսևորման համար:

- Որո՞նք պիտի լինեն մանկավարժի փոխանցած մեծագույն արժեքները:

- Միայն Կրթված, գրագետ ու դաստիարակված սերունդն է արժանի և կարող է հայրենիք ունենալ, պահպանել իր ազգային արժեքները, ապրել ինքնատիպ, ունենալ արդար հասարակություն, մասնակցել միջազգային կյանքին, և առհասարակ կառուցել բարեկեցիկ կյանք:

- Ի՞նչ կարգախոսով եք մտնում լսարան:

- Այն աշխատանքը, որը կատարում եմ լսարանում, այն նվիրվածությունն ու եռանդը, որը ներդնում եմ իմ մանկավարժական գործունեության մեջ, տա Աստված, որ նույն նվիրումով ու պատասխանատվությամբ իրենց աշխատանքին վերաբերվեն նաև իմ երեխաներին ուսուցանողները:

Որպես ամփոփում՝ կասեմ, որ կրթական և դաստիարակչական գործընթացը քաղաքակիրթ աշխարհի թիվ մեկ խնդրի լուծումն է, և այդ գործի պատասխանատվությունը մանկավարժի ուսերին է: Ամենապատվով պետք է կրել այդ պատասխանատվությունը և արժանապատվորեն կատարել այդ բարձր առաքելությունը՝ քանի որ մանկավարժի ձեռքում է հասարակության ապագան:

Բլից հարցեր
Պատասխանում ենք կարճ և արագ:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:
- Թող օրը բարի լինի:
- Օրն սկսում եք ժամը...
- Օրն սկսում եմ առավոտյան 6:40 ից:
- Ձեր սիրած աֆորիզմը:
- «Գործն է գործ ցույց տալիս» կամ «Գործը գործից չէ, այլ գործն անողից է»:
- Սիրելի զբաղմունքդ:
- Երաժշտության ներքո ստեղծագործելը:
- Խորհուրդ, որը կտայիք:
- Ապրել աստվածային և մարդկային առաքինություններով:

Հարցազրույցը վարեց
Ելենա Չերնեցկայա

Ստեղծագործում են մերոնք

ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՆԴՈՒՆԴՈՒՄ

Դժվար օր էր: Տիգրանը ծառայությունից հետո տուն վերադարձավ: Հուզմունքը խեղդում էր կոկորդը, հարցերն անընդհատ հանգիստ չէին տալիս իրենց թեման էլ հենց դա էր:

Ամեն ինչից այնքան էր զզվել, որ որոշեց հաց չուտել, պառկել և գոնե քնով փրկվել այդ սարսափից: Պառկեց, փակեց աչքերը, բայց մտքերը հանգիստ չէին տալիս նրան: Նա անընդհատ շրջվում էր այս կողմ, այն կողմ: Հուսահատված բացեց աչքերը, նայեց ժամին և տեսավ, որ անցել էր 2 ժամ: Զայրացավ, սկսեց բղավել, հարվածում էր բարձին, հետո հանկարծ փռվեց կրկին իր տեղը և սկսեց լացել:

Հանգստացավ, հասկացավ, որ թուլության ժամանակը չէ, և կրկին փակեց աչքերը: Նա լսում էր ժամացույցի ձայնը և աշխատում էր չմտածել: Մեկ էլ մի ակնթարթ և նա կանգնած էր մի վայրում, որտեղ ֆիզիկապես չկար: Նա այնտեղ էր, ինչպես ֆանտաստիկ ֆիլմում՝ անմարմին մի էակ:

Նայում էր սառած հայացքով մի փոքրիկ ծառի, և հանկարծ նրա գիտակցությունը շունչ ստացավգ դա նման էր ծրագրի խափանումից նոր ազատված համակարգչի աշխատանքին: Տիգրանը փորձում էր հասկանալ, թե որտեղ է, և ինչ է կատարվում, վերջապես հասկացավ, որ տարածքի և ժամանակի բացակայության դատարկ մի անդունդում է:

Նա սևեռեց հայացքը դեպի ծառը և փորձեց ոչ թե նայել, այլ տեսնել այն: Եվ հանկարծ ծառն սկսեց շարժվել: Նա մեծացա՜վ, մեծացա՜վ, ճյուղերը շատացան, հետո սկսեցին խճճվել: Արյուն էր հոսում: Հետո կտրեցին սրով: Արյունը հոսում էր: Նա կազդուրվեց: Անցավ որոշ ժամանակ, սակայն ճյուղերն սկսեցին կրկին խճճվել, և կրկին՝ արյուն:

Կանգ առավ ամեն ինչ: Ժամանակ չկա, չկա ոչ մի օրենք: Արյան կաթիլը խճճված ճյուղից ընկնելուց վայրկյան էր մնացել, և Տիգրանը փորձում էր հասկանալ՝ ինչու է ճյուղերի խճճվելու արդյունքում ծառն արնահոսում:

Մեկ էլ ամեն ինչ սկսեց շատ արագ ընթանալ: Ծառն աճում էր կրկին ու կրկին, խճճվում էր, կտրում էին սրով, կրկին էր աճում: Ճյուղերը կտրեցին, փորձեցին պատվաստել մեկ այլի հետ՝ նեխեց, չորացավգ և թողեցին ծառին: Երկար ժամանակ նա մնաց առանց արտաքին գործոնների պատճառած ֆիզիկական վնասի, բայց ճյուղերը խճճվում էին: Արտաքին ազդեցությունը գրեթե անտեսանելի էր, բայց ծառն արնահոսում էր:

Եվ ամենադժվար պահին, երբ որոշել էր դուրս պրծնել մոլորությունից, նրան և՛ վառեցին, և՛ կտրեցին, և՛ պատվաստեցին այլի հետ, և՛ արմատախիլ արեցին, այնպես, որ նշան անգամ իրենից չմնա:

Անցավ երկար ժամանակ, և մեկ էլ հանկարծ ծառը կրկին աճեց: «Նրան անհնար է վերացնել, միայն թե չխճճվի»,-ասաց Տիգրանը՝ բացելով աչքերը:

Տիգրանը գտավ պատասխանը:

Արգիշտի Ավետյան
«Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում (Փրկարարական գործ)» մասնագիտության 4-րդ կուրս

ԱՂՈԹՈՒՄ ԵՄ ԾՆՐԱԴԻՐ

Դու իջար երկնքից
Ու սփռեցիր լույս ու շող,
Արարեցիր ջուր ու հող,
Հավատ տվիր բոլորին:

Արարեցիր հույս ու սեր,
Մեր գթառատ միա՛կ Տեր,
Որ հավատանք ու հուսանք,
Անճարներին միշտ գթանք:

Աղոթում եմ ծնրադիր.
Ես ազգ ունեմ տարագիր...
Փառավորի՛ր Հայաստանը,
Որ հայն ապրի միշտ իր տանը:

Վաչագան Շահինյան
շրջանավարտ

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՊԱՏՈՒՀԱՆ

Լեոնարդո դա Վինչին՝ «Մոնա Լիզայի» հեղինակը, գրել է իր նոթերը աջից ձախ՝ հայելային գրությամբ: Նույնիսկ այսօր նրա գրածը կարդալու համար պետք է հայելի կամ հատուկ սկանավորում:

Ինչո՞ւ էր նա այդպես գրում: Դեռևս չգիտենք՝ դա գաղտնիություն պահպանելու՞ փորձ էր, թե՞ ուղղակի սովորություն՝ ձախլիկ լինելու պատճառով:

Նախորդ համարի պատասխանը՝ մոտոցիկլավարը, քանի որ նա սաղավարտ չէր կրում:

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչությունում:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 100 օրինակ:
Ստորագրված է տպագրության 29.05. 2026թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան